ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 փետրվարի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

26
(2692)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 164

Հայաստանում կենսաթոշակը կամ նպաստն անկանխիկ եղանակով ստացող քաղաքացիները 2022-ի հուլիսից, կառավարության որոշմամբ, հնարավորություն ստացան հետվճար (քեշբեք) ստանալ վճարային քարտերով կատարված գործարքներից:

Ծրագրին միացած բանկերի քարտապան կենսաթոշակառուներն ու նպաստառուները ՀՀ տարածքում վճարային քարտերով վճարելու դեպքում ամեն ամիս ստանում են հետվճար՝ նախորդ ամսում կատարած անկանխիկ գործարքների հանրագումարի 10%-ի չափով, բայց ոչ ավելի, քան ամսական 5 000 դրամը: Կառավարությունը, որպես ծրագրի իրականացման արդյունք, նշել էր, որ ակնկալվում է՝ մինչեւ 2022-ի տարեվերջ ծրագրի փաստացի շահառու կդառնա եւ առնվազն 3 ամիս անընդմեջ կստանա նախատեսված հետվճարը բանկային քարտով կենսաթոշակ ստացող կենսաթոշակառուների 80%-ը:

Կես տարի անց, ակնկալված 80%-ի փոխարեն, հետճվարից օգտվում է քարտապան թոշակառուների 15%-ը

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից, #CivilNetCheck-ի հարցմանը ի պատասխան, հայտնում են, որ Հայաստանում կենսաթոշակառուների եւ նպաստառուների թիվը ներկայում շուրջ 585 հազար է, որոնցից 474 հազարը թոշակը (նպաստը) ստանում է անկանխիկ՝ բանկային քարտով:

Անկանխիկ եղանակով կատարված վճարումներից «քեշբեք» ստացող թոշակառուների եւ նպաստառուների թիվը 2022-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է շուրջ 67 հազար կամ քարտապան շահառուների 15%-ը (բոլոր թոշակ եւ նպաստ ստացողների 11%-ը). սա կառավարության մինչեւ տարեվերջ «անկնկալած» թվից ավելի քան 5 անգամ պակաս է: Միջին հաշվով՝ թոշակառուներին ամսական վճարված հետվճարի չափը 2022-ի հուլիս-սեպտեմբերին կազմել է մոտ 2600-2900 դրամ, հոկտեմբեր-դեկտեմբերին՝ 3100-3400 դրամ, այսինքն՝ կառավարությունը հերթական անգամ չի կարողացել կատարել ծրագիրը :

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորների օգնականները հասան իրենց երկրորդ նպատակին եւս: Մասնավորապես՝ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ օգնականներին տրվել է աշխատավարձի 15 տոկոսի չափով պարգեւավճար աշխատակազմի նոր ղեկավար-քարտուղար Դավիթ Առաքելյանի կողմից: Հիշեցնենք , որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի եւ քարտուղար Արթուր Հովհաննիսյանի օգնականները մի խումբ այլ ՔՊ պատգամավորների օգնականների հետ պարգեւավճար են պահանջել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանից եւ աշխատակազմի արդեն նախկին ղեկավար Վահան Նարիբեկյանից: Նրանք պահանջում էին պարգեւավճար տալ իշխող խմբակցության պատգամավորների օգնականներին, սակայն օրենքով պարգեւավճար ԱԺ-ում հասանելի է միայն պետծառայողներին, որոնք պրոֆեսիոնալներ են: Ողջ մեղքը բարդվեց աշխատակազմի նախկին ղեկավարի վրա: ՔՊ դռնփակ նիստից հետո նա հեռացվեց պաշտոնից, սակայն փաստացի օգնականների երկրորդ պահանջը եւս կատարվեց, եւ նրանք նաեւ ստացան պարգեւավճարները: Ստացվում է՝ գումար չկա առաջնագծում կահավորանք եւ կեցավայր կառուցելու համար, բայց իշխանական պատգամավորների օգնականների համար պարգեւավճարների գումար կա:

Խորհրդարանական ընդդիմադիր երկու խմբակցություններն առաջիկայում շրջանառության կդնեն ԱԺ որոշման նախագիծ, որով առաջարկում են ՍԴ դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու առաջարկով դիմել Սահմանադրական դատարան: Որպես Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հիմք՝ նշվում է, որ նա ձեռնարկատիրությամբ է զբաղվել, ինչն օրենքով անհամատեղելի է դատավորի կարգավիճակի հետ: Նշենք, որ Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնանկության հարցը կարող են բարձրացնել խորհրդարանը եւ իրենք՝ ՍԴ դատավորները: Քանի որ մինչ այժմ ՍԴ դատավորները ոչինչ չեն արել, խորհրդարանականները որոշել են դատավորին պատժելու գործառույթը վերցնել իրենց վրա: Նախագիծը մինչ լիագումար նիստերի օրակարգ ներառվելը երկշաբաթյա ժամկետում պետք է ստանա գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը, որն այս դեպքում հավանաբար կլինի ԱԺ պետական-իրավական հարցերի հանձնաժողովը: Դրական եզրակացություն ստանալու դեպքում այն կմտնի ԱԺ լիագումար նիստերի օրակարգ: Բայց կա մի խնդիր. ընդդիմությունը այս հարցում կարիք ունի իշխանական ՔՊ-ի ձայների: «ԱԺ կանոնակարգ» սահմանարական օրենքի համաձայն՝ խորհրդարանում համապատասխան նախագիծը կարող է ընդունվել պատգամավորների ձայների 3/5-ով: Ստացվում է՝ որպեսզի ԱԺ-ն կարողանա դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցով դիմել ՍԴ, անհրաժեշտ է լինելու 65 պատգամավորի համաձայնությունը: Ընդդիմադիր երկու խմբակցությունները միասին ունեն 35 ձայն, եւ ընդդիմությունը պետք է «դիմի» ՔՊ-ականներին՝ անհրաժեշտ ձայներ ստանալու համար: Ընդդիմադիրները, սակայն, համոզված են, որ իրենց սրտի դատավորի դեմ գործընթացին իշխանականները չեն միանա, այլ կհովանավորեն փաստացի ՔՊ դատավորի ապօրինությունները: Ամեն դեպքում, եթե նախագիծն ԱԺ-ում ընդունվի, կուղարկվի ՍԴ, որն էլ արդեն որոշում կկայացնի դատավորների լիազորությունները դադարեցնել-չդադարեցնելու մասով: ՍԴ-ն դատավորի լիազորությունների դադարեցնելու որոշումը ՍԴ-ն կարող է ընդունել դատավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով մեկամսյա ժամկետում:

2022 թվականի դեկտեմբերի 29-ի կառավարության նիստում հաստատվեց Քրեական օրենսգրքում նոր փոփոխությունների նախագիծը, որով պատասխանատվություն կսահմանվի ինքնիշխանությունից հրաժարվելու կոչեր հնչեցնելու համար: Նախագծով առաջարկվում է ինքնիշխանությունից հրաժարվելուն ուղղված հրապարակային կոչերի համար սահմանել տարբեր չափի տուգանքներից մինչեւ առավելագույնը 3 տարվա ազատազրկում, կոչերը տեղեկատվական տարբեր աղբյուրներով, ՁԼՄ-ներով տարածելու համար՝ 2-5 տարվա ազատազրկում: Ինքնիշխանությունից հրաժարվելուն ուղղված տարբեր բռնի գործողություններ կատարելու համար առաջարկվում է սահմանել 10-15 տարվա ազատազրկում: Նկատենք՝ այս նախագիծը կառավարության նիստում ընդունվեց այն բանից հետո, երբ իշխանական տարբեր շրջանակներ, այդ թվում՝ ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը, հայտարարեցին, թե իրենց ստիպում են մտնել Միութենական հանրապետություն: «Երբ Հայաստանը դիմադրում է, ստանում է ճնշումներ ռազմական տեսքով», - ասել էր նաեւ նա: Իսկ, ահա, այս հայտարարությունից օրեր առաջ էլ՝ դեկտեմբերի 14-ին, ՔՊ պատգամավոր Գագիկ Մելքոնյանն էր հայտարարել, թե ՌԴ-ն ստիպում է ՀՀ-ին մտնել Միութենական պետություն, անգամ ժամկետ է դրել, սակայն ՀՀ իշխանությունները մերժել են, փակվել է Լաչինի միջանցքը, եւ ռուս խաղաղապահները բացելու ուղղությամբ ոչ մի քայլ չեն անում: Նկատենք՝ միութենական կազմի մեջ մտնելը նաեւ ենթադրում է ինքնիշխանությունից հրաժարում, եւ հաճախ կազմի մեջ մտնելու առաջարկին լինում են կողմ արտահայտվողներ: Եվ ստացվում է, որ այսուհետ ՌԴ-ի հետ միութենական հանրապետությունում լինելու մասին որեւէ խոսք անգամ դատապարտելի է լինելու իրավական առումով: Այսինքն՝ ռուսամետ քաղգործիչները, որոնք միութենական պետության ջատագովներն են, անխուսափելիորեն կպատժվեն:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԶԵԿՈՒՅՑ ԷՐ ԱԼԻԵՎԻՆ

Փետրվարի 20-ին հայտնի դարձավ, որ ձերբակալվել է 3-րդ բանակային կորդուսի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Գրիգորի Խաչատուրովը: Լրատվամիջոցների հաղորդմամբ՝ Խաչատուրովին ձերբակալել է ԱԱԾ ֆինչական դեղարտամենտը դատարան կալանքի ներկայացնելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանի հետ: Մեզ հետ զրույցում Սեյրան Օհանյանը, անդրադառնալով Խաչատուրովի ձերբակալմանը, նշում է՝ այս իշխանությունների վարքագիծն է. հետապնդում են բոլոր այն մարդկանց, որոնք ռազմական ճանապարհ են անցել: Ըստ նրա՝ զինվորականների նկատմամբ հետապնդումները նաեւ յուրահատուկ զեկույց էր իրենց կառուցողական գործընկերոջը՝ Ալիեւին, որ, տե՛ս, պատժելու ենք այն մարդկանց, որոնք կանգնած են եղել պաշտպանության ակունքներում:

-Պարոն Օհանյան, ինչպե՞ս կգնահատեք Գրիգորի Խաչատուրովի ձերբակալման որոշումը:

-Իրականում սա քաղաքական գործընթացների շրջանակում է տեղի ունենում: Այս իշխանությունների վարքագիծն է. նախ՝ ձերբակալում են մարդկանց, որոնք ռազմական ճանապարհ են անցել, փորձառություն ունեն եւ մերժում են օրվա իշխանություններին, քանի որ նրանց վարած քաղաքականության արդյունքում են Հայաստանն ու Արցախը այս իրավիճակում: Ե՛վ Յուրի Խաչատուրովը, եւ՛ նրա որդին՝ Գրիգորի Խաչատուրովը, մեր բանակի ակունքներում մարդիկ են, ունեն անցած ճանապարհ. մենք մեր աջակցությունն ենք ցուցաբերում Գրիգորի Խաչատուրովին:

-Պարոն Օհանյան, ընդդիմադիրները մեղադրում են իշխանություններին, որ զինվորականների վրա ճնշում գործադրելով կամ նրանց ձերբակալելով՝ մտածված թիրախավորում են բանակը, իշխանություններն էլ հակադարձում են՝ թե բոլոր նրանք, ովքեր չարաշահումներ են թույլ տվել իրենց պաշտոնավարման օրոք, պետք է պատասխանատվության ենթարկվեն:

-Ես կարծում եմ, որ ոչ մեկը չի խուսափում օրենքի եւ դատահիրավական համակարգի առաջ պատասխանատու լինելուց, բայց ոչ այս իշխանությունների, որոնք ճնշումներ են գործադրում դատարանների վրա, ինչպես նաեւ այն մարդկանց վրա, որոնք ճանապարհ են անցել, բանակում մեծ դերակատարություն են ունեցել: Ըստ էության, այդ ճնշումների, բանակում փորձառություն ունեցողներին արագ-արագ պաշտոններից ազատելու եւ հրամանատարական կազմը գլխատելու պատճառով է, որ մենք 44-օրյա պատերազմում պարտություն ենք կրել: Այս իշխանությունները բանակի վերաբերյալ քարոզչությունը երկու մասով են տանում. երբ իրենց պետք է, վերամբարձ խոսքեր են ասում, իրենք իրենց են գովաբանում, ասում են՝ ոչ մեկի ժամանակ այդքան զենք չի գնվել, որքան, իբրեւ, իրենց, բայց հաշվի չեն առնում, որ ոչ մի իշխանության օրոք այդքան զենք-զինամթերք չի հանձնվել իշխանություններին, ոչ մեկի ղեկավարության ժամանակ բանակի այդքան զորամասեր, մշտական տեղակայման վայրեր կամ անշարժ գույքեր չեն հանձնվել հակառակորդին: Մյուս կողմից էլ՝ եթե իրենց պետք է լինում, բոլոր սլաքներն ուղղում են բանակի եւ բանակի ղեկավարության ուղղությամբ, ինչն անընդունելի է: Բանակին վերաբերող հարցերն այս իշխանությունները վերածել են «կիսաբաց լուսամուտների», ցնդաբանություններ են արտահայտում բանակի մասին՝ բացարձակ տեղեկություն չունենալով, թե ինչպես է բանակը կազմավորվել, ինչպես է զարգացման ընթացքն անցել բոլոր ղեկավարների ու ՊՆ նախարարների օրոք. դատարկ խոսակցություններ են վարում: Բանակը թիրախ դարձնելով՝ նրանց իջեցնում են մեր դիմադրողականության մակարդակը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ ⇨

«Խորհրդարանում հյուրընկալեցի Հայաստանում Նիդերլանդների Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Նիկոլաս Սխերմերսին,- հայտնում է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:-Քննարկեցինք մարդու իրավունքների ոլորտին առնչվող, փոխադարձ հետաքրքրության մի շարք հարցեր: Դեսպանին ներկայացրի «Ժողովրդավար» Հայաստանում մարդու իրավունքների խախտումները:

Որպես ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ հայտնեցի պատրաստակամությունս՝ խորացնելու համագործակցությունը Նիդերլանդների խորհրդարանի հետ:

Դեսպանն իր խոսքում նշեց, որ իրապես ցանկալի է ընդլայնել համագործակցության դաշտը, ներկայացրեց դեսպանատան առաջիկա ծրագրերը»:

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

Հոկտեմբերի 20-ից Հայաստանում իր գործունեությունն է սկսել ԵՄ դիտորդական առաքելությունը: ArmLur.am-ի հետ զրույցում «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Արուսյակ Զուլիակյանը նշեց՝ ակնկալում է, որ այս դիտորդական առաքելությունը կնպաստի, որպեսզի հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը կայունանա: Մեզ հետ զրույցում պատգամավորն անդրադարձավ նաեւ ռուսական կողմի կոշտ հայտարարություններին ԵՄ դիտորդական առաքելության մասով՝ նկատելով, որ Ռուսաստանը մինչ այս կամ չի արձագանքել ՀՀ տարածքի նկատմամբ ադրբեջանական ագրեսիային, կամ էլ ոչ բավարար արձագանք է տվել. «Պետք չէ սեփական անգործության հարցում Հայաստանին մեղադրել: Ռուսաստանին այս տարածաշրջանից չի կարող դուրս մղել որեւէ մեկը, բացի Ռուսաստանից. եթե կա երկիր, որը կարող է դուրս մղել նրան այս տարածքից, դա միայն Ռուսաստանն իր գործողություններով կամ անգործությամբ»,- ասում է պատգամավորը:

ՄԱՐԴԻԿ ՉԿԱՆ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունում թափուր աշխատատեղեր կան, եւ ինչպես երեւում է, դրանք զբաղեցնել չի հաջողվում: Բանն այն է, որ Արտաքին գործերի նախարարության կողմից հայտարարվել էր մրցույթ թափուր տեղերի համալրման նատակով, եւ փաստաթղթերի ներկայացման ժամկետները երկարացվել են, որպեսզի մարդիկ կարողանան դիմել, եւ հնարավոր լինի լրացնել թափուր հաստիքները: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ խոսքը թվով 16 հաստիքների մասին է, դրանց թվում կան 2-րդ քարտուղարի, կցորդների, 3-րդ քարտուղարի հաստիքներ: Հայտարարության մեջ նշված են նաեւ պաշտոնային դրույքաչափերը: 2 տարվա աշխատանքային ստաժ ունեցող, առնվազն երկու օտար լեզվի գերազանց իմացությամբ 2-րդ կցորդի պաշտոնային դրույքաչափը կազմելու է 221 հազար դրամ, 3-րդ քարտուղարինը՝ 189 հազար դրամ, կցորդինն էլ՝ 163 հազար դրամ: Հասանելի է նաեւ հարցաշարը. բացի արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերից, պետք է իմանալ, օրինակ, թե ում է Հայաստանում պատկանում իշխանությունը, ինչպես է այն իրականացվում, ով է իրականացնում նախարարության կառավարումը եւ այլն: Արտաքին գործերի նախարարությունը մեկն է այն գերատեսչություններից, որտեղ թափուր հաստիքները շատ են, եւ ցանկացողներ չկան՝ պետական համակարգում եւ այս իշխանությունների հետ աշխատելու: Դա էլ հանգեցնում է մի իրավիճակի, երբ նախկին պաշտոնյաները նշանակվում են օգնականներ ու խորհրդականներ:

ՈՎՔԵՐ ԵՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Մարտի 26-ին կայանալիք Սյունիքի մարզի Սիսիան եւ Շիրակի մարզի Անի համայնքներում ավագանու արտահերթ ընտրությունների համար առաջադրումներն ավարտվել են: Շիրակի մարզի Անի համայնքում առաջադրվել են «Ազգ-համայնք» (կազմում՝ Հայաստանի Ժողովրդավարական ազատական միություն» կուսակցությունը եւ Ռեֆորմիստների կուսակցությունը), «Իմ հզոր համայնք», «Հայկական երազանք» եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները: Սյունիքի մարզի Սիսիան համայնքում առաջադրվել են Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Սիսիանում իրենց թեկնածուն համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանն է: Նշենք, որ վերջինս նաեւ ՔՊ խմբակցության պատգամավոր Կարեն Համբարձումյանի կնոջ եղբայրն է: Ավելին՝ վերջինիս հայրը՝ Աղասի Հակոբջանյանը նույնպես եղել է Սիսիան համայնքի ղեկավար՝ ԲՀԿ-ից: Անի համայնքում նույնպես ՔՊ թեկնածուն համայնքապետի ղեկավարի պաշտոնակատար Արման Սարիբեկյանն է: Հետաքրքիր է, սակայն, որ «Ապրելու երկիր» կուսակցությունը, որը Սիսիանում նախորդ ընտրությունների ժամանակ 4 մանդատ էր ստացել, այս անգամ առհասարակ ընտրություններին չի մասնակցում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Սիսիանում ՀՀԿ-ի ավագանու ցուցակը գլխավորում է Էլցանցի տնօրեն Ջիվան Մարգարյանը, իսկ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ընտրացուցակի առաջին համարը VTB բանկի Սիսիանի մասնաճյուղի կառավարիչ Ավագ Ասատրյանն է:

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Հայաստանի պաշտպանության նախարարությունը վարժական հավաքներ է հայտարարելու՝ երկու ամիս ժամկետով: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Պաշտպանության նախարարությունը նախատեսում է այս տարվա ապրիլի 15-ից մինչեւ հունիսի 15-ը անցկացնել պահեստազորի առաջին խմբի առաջին եւ երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական եւ սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ: Մեզ հայտնի դարձավ, որ վարժական հավաքներին կներգրավվի մինչեւ 953 քաղաքացի, որոնցից 476-ը՝ կրտսեր ենթասպայական եւ շարքային կազմերի, 25-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 452-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

Ի դեպ, տեղեկացնենք, որ հայտարարվող վարժական հավաքների ծախսերն իրականացվելու են ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով Պաշտպանության նախարարությանն այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին:

ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմինը հայտարարել է արտաքին մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի հանրակրթության վարչության ավագ մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար: Հայտարարության մեջ մանրամասն նշված է, թե ինչպես է իրականացվելու մրցույթը, ովքեր կարող են մասնակցել, եւ ինչ շրջանակներից են լինելու հարցատոմսի հարցերը: Նախ՝ նշենք, որ հիմնական աշխատավարձը կազմելու է 189 հազար դրամ: Թեստի ձեւանմուշում հանդիպում ենք հետեւյալ հարցերի.

Դասավորե՛ք ըստ համապատասխանության՝ ձախ սյունակի բառերին համապատասխան աջ սյունակի հայերեն համարժեքները.

1. Պրեզենտացիա
2. Մենեջմենթ
3. Տոտալիտարիզմ
4. Լիբերալիզմ

Ա. Շնորհանդես
Բ. Ազատականություն
Գ. Ամբողջատիրություն
Դ. Կառավարում

Պատասխան՝
1) 1-Ա, 2-Բ, 3-Դ, 4-Գ
2) 1-Դ, 2-Ա, 3-Գ,4-Բ
3) 1-Ա, 2-Դ, 3-Գ, 4-Բ
4) 1-Բ, 2-Գ, 3-Դ, 4-Ա

Կամ հարցի մեկ այլ օրինակ.

Դասավորե՛ք ճիշտ հերթականությամբ

Ա. կիրակի
Բ. երեքշաբթի
Գ. շաբաթ
Դ. երկուշաբթի

Պատասխան՝
1) Ա, Բ, Գ, Դ
2) Դ, Բ, Գ, Ա
3) Գ, Դ, Ա, Բ

ԱՄԵՆԱՄՅԱ ԵԼՈՒՅԹ

ՊՈՒՏԻՆԸ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է ԱՐԵՎՄՈՒՏՔԻՆ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը խորհրդարանի երկու պալատների՝ Դաշնության խորհրդի եւ Պետական դումայի օրենսդիրներին, հրավիրված բարձրաստիճան քաղաքական ու հանրային գործիչներին հասցեագրված ամենամյա ուղերձով է հանդես եկել: Նա հայտարարել է, թե Արեւմուտքն է սանձազերծել ներկայիս պատերազմը: «Ռուսաստանը չի պատերազմում Ուկրաինայի ժողովրդի դեմ, Ուկրաինայի ժողովուրդը դարձել է կիեւյան ռեժիմի եւ դրա արեւմտյան տերերի պատանդը»,- հայտարարել է Պուտինը: Նա պնդել է, թե Ռուսաստանն ամեն բան արել է ուկրաինական ճգնաժամը խաղաղ եղանակով կարգավորելու համար, «սակայն նրա թիկունքում բոլորովին այլ սցենար է մշակվել»:

Պուտինը պնդել է նաեւ, թե «Արեւմուտքը սադրիչ գործողություններով եւ ահաբեկիչների միջոցով փորձել է հակամարտություններ հրահրել նախկին խորհրդային երկրներում եւ Ռուսաստանում»: Նա ասել է, որ այսօրվա ուղերձն ընթերցում է երկրի համար բարդ եւ շրջադարձային փուլում, երբ տեղի են ունենում արմատական, անշրջելի փոփոխություններ ամբողջ աշխարհում, կարեւորագույն պատմական իրադարձություններ, որոնք որոշում են երկրի եւ ժողովրդի ապագան: Պուտինը հայտարարել է, որ բոլոր ռուսները հիմա վիթխարի պատասխանատվություն են կրում: «Անցյալ դարի 30-ական թվականներին Գերմանիայում նացիստների համար Արեւմուտքը գործնականում բացեց իշխանության ճանապարհը, իսկ մեր ժամանակներում նրանք «հակառուսաստան» են ստեղծել Ուկրաինայում»,- շարունակում է Պուտինը: «Եվ այդ ամենը մեկ նպատակով՝ տարածքներ պոկել մեր երկրից», - ասել է նա:

ՌԴ նախագահի խոսքով՝ արեւմտյան քաղաքական գործիչներին չի հետաքրքրում, թե ում վրա խաղադրույք կատարել Ռուսաստանի դեմ պայքարում, կարեւորը՝ կատարեն իրենց կամքը: ««Հակառուսաստան» նախագիծը Արեւմուտքի ռեւանշիստական քաղաքականության մի մասն է. գաղափարը մեկն է՝ Եվրոպայում պատերազմ հրահրել ուրիշի ձեռքերով... Մենք Ուկրաինայի ժողովրդի հետ պատերազմի մեջ չենք, նրանք իրենք են դարձել Կիեւի ռեժիմի պատանդը»,- ասել է Պուտինը: Խոսելով Արեւմուտքի կողմից Կիեւին զենքերի մատակարարման մասին՝ նա նշել է. «Բոլորին պետք է պարզ լինի մեկ հանգամանք. որքան շատ հեռահար համակարգեր գան Ուկրաինա, այնքան մենք ստիպված կլինենք հեռացնել վտանգը մեր սահմաններից»:

Նրա խոսքով՝ Արեւմուտքը մտադիր է լոկալ հակամարտությունը տեղափոխել գլոբալ առճակատման փուլ: «Մարտի դաշտում Ռուսաստանին հաղթելն անհնար է, հետեւաբար ավելի ու ավելի ագրեսիվ տեղեկատվական հարձակումներ են իրականացվում: Նրանք անընդհատ ստում են, չեն դադարեցնում հարձակումները մեր մշակույթի, Ռուս ուղղափառ եկեղեցու վրա», - ասել է Պուտինը՝ հավելելով, որ Արեւմուտքը հենվում է ազգային դավաճանների վրա, որոնք միշտ ունեն նույն ատելության թույնը իրենց հայրենիքի նկատմամբ: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Դաշնային ժողովին ուղղված ուղերձում ասել է, որ 2023 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների եւ 2024 թվականին նախագահական ընտրությունները կանցկացվեն օրենքին խստիվ համապատասխան: «Ուզում եմ ընդգծել, որ այս տարվա սեպտեմբերին եւ՛ տեղական ու տարածքային իշխանությունների, եւ՛ 2024 թվականի նախագահական ընտրությունները կանցկացվեն օրենքին խստիվ համապատասխան՝ ժողովրդավարական սահմանադրական բոլոր ընթացակարգերի պահպանմամբ»,- ասել է Պուտինը:

«Նրանք, ովքեր բռնել են երկրի դավաճանության ճանապարհը, պատասխանատվության կենթարկվեն օրենքով»,- ասել է նա: Միաժամանակ նա ընդգծել է, որ իշխանությունները մտադիր չեն «վիուկների որս» կազմակերպել: «Ով գնում է ուղիղ դավաճանության ճանապարհով, կատարում է ահաբեկչական եւ այլ հանցագործություններ, պատասխանատվության կենթարկվի օրենքով: Բայց մենք երբեք չենք նմանվի Կիեւի ռեժիմին եւ արեւմտյան վերնախավերին, որոնք զբաղվում են վիուկների որսով»,- ասել է Պուտինը: ՌԴ նախագահը նշել է, որ իշխանությունները «հաշիվներ չեն մաքրի» նրանց հետ, ովքեր «հրաժարվել են հայրենիքից», բայց «դա կմնա նրանց խղճի վրա»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ երեկ շարունակեցին 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հարկաբյուջետային եւ ծախսային շրջանակի շուրջ քննարկումները:

Քննարկման առարկա են եղել հարկաբյուջետային շրջանակի հիմնական ցուցանիշների, Կառավարության ծրագրի առաջնահերթությունների իրականացման, ոլորտային ծախսերի, հնարավոր ռիսկերի վերաբերյալ կանխատեսումները: Անդրադարձ է եղել տարբեր ոլորտներում նախաձեռնած բարեփոխումների ընթացքին, պետական գերատեսչությունների՝ ընթացիկ ու կապիտալ ծախսերի սահմանաչափերի գնահատման արդյունքներին եւ դրանց հիման վրա հետագա քայլերին:

Կառավարության ղեկավարը կարեւորել է բարեփոխումների, ծրագրերի կառավարման ու իրականացման արդյունավետության շարունակական բարձրացումը, ինչը կխթանի տնտեսական աճը եւ կլավարկի հարկաբյուջետային քաղաքականությունը:

Վարչապետը հանձնարարել է շարունակել շահագրգիռ միջգերատեսչական քննարկումները 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի շուրջ:

11 ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել Ազգային ժողովի նախկին պատգամավոր, Էրեբունի վարչական շրջանի նախկին ղեկավար Մ.Ս.-ից եւ նրա հետ փոխկապակցված 3 անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել շուրջ 11 միլիարդ դրամ արժեքով ապօրինի ծագում ունեցող գույք:

Մասնավորապես, Երեւան քաղաքում՝ 21 անշարժ գույք, մեկ անշարժ գույքի միջին շուկայական արժեք, Կոտայքի մարզում՝ մեկ անշարժ գույք, մեկ տրանսպորտային միջոց, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց միջին շուկայական արժեքը, որն ընդհանուր կազմում է ավելի քան 2.3 միլիարդ դրամ (որոշ գույքեր դեռեւս գնահատված չեն):

Ութ իրավաբանական անձանցում մասնակցություն եւ մեկ փոխառության պահանջի իրավունք:

Բռնագանձման է ենթակա նաեւ ավելի քան 8.6 միլիարդ դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի եւ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված՝ օրինական եկամուտներով չհիմնավորվող դրամի հանրագումար:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ԽԱՉԱՏՈՒՐՈՎԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Պաշտպանության նախարարության N զորամասի հրամանատարի պաշտոնը զբաղեցրած Գ.Խ.-ի (Գրիգորի Խաչատուրովի) նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել. տեղեկացնում է Գլխավոր դատախազությունը:

Խաչատուրովը ձերբակալվել է:

Ըստ դատախազության՝ քրեական հետապնդումը հարուցվել է պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքն օրինականացնելու (փողերի լվացում) համար:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը հաղորդում է, որ ՄԻՊ ներկայացուցիչները գտնվում են Հակակոռուպցիոն դատարանում Գրիգորի Խաչատուրովին տեսակցելու նպատակով:

Մեղադրանք է առաջադրվել նաեւ բանակի գեներալ, 3-րդ բանակային կորպուսի նախկին հրամանատար, գեներալ Գրիգորի Խաչատուրովի ընկերոջը՝ Էդգար Արշակյանին: Այս մասին երեկ՝ փետրվարի 21-ին, դատարանի բակում լրագրողների հետ զրույցում ասաց Էդգար Արշակյանի փաստաբան Միհրան Պողոսյանը:

Նա հայտնեց, որ Արշակյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու մասին արգելքը:

Անդրադառնալով բուն քրեական գործին՝ Միհրան Պողոսյանն ասաց. «Եկեք մոռանանք զորամասի տարածք հասկացողությունը. դա անշարժ գույք է, որը 90-ականների կեսերից երբեւիցե որպես զորամաս չի ծառայել: Զորամասերը եւ դրանց տարածքները հատուկ նշանակության հողամասի տակ են ընդգրկված եղել: Դրանք իրավական հիմք ստացել են 2005-ին, դրանից հետո դրանք որպես զորամաս երբեւիցե առկա չեն եղել»:

Դիտարկմանը, որ այդ տարածքներն անօտարելի են, փաստաբանն արձագանքեց. «Դրա պատասխանատուն երբեւիցե չի կարող հանդիսանալ Էդգար Արշակյանը, որովհետեւ տվյալ տարածքների օտարելիության պայմաններ օրենքը նախատեսում է, թե որ պայմաններում կարող են տվյալ տարածքներն օտարվել»:

Պողոսյանն ասաց, որ քրեական գործում առկա 18 միլիոն դրամի գրավ վերցնելու մասը նույնպես իրականությանը չի համապատասխանում. «Գլխավոր դատախազն Ազգային ժողովում ուղղակի զբաղված էր մանիպուլյացիաներով, որովհետեւ տվյալ գույքի համար երբեւիցե 18 միլիոն դրամ գումար չի վերցվել: 2016-ի օգոստոսի 12-ին Խաչատուրովը ձեռք է բերել բնակարան Վանաձորում, այդ ժամանակ կքնվել է հիփոթեքային պայմանագիր, որի պայմաններում միայն այդ բնակարանը գրավադրելու համար Խաչատուրովին տրամադրվել է 18 միլիոն 484 հազար դրամի վարկային գիծ: Որոշ ժամանակ անց բանկը Խաչատուրովին խնդրել է ներկայացնել լրացուցիչ գրավ, նա էլ իր ընկերոջը՝ Էդգար Արշակյանին, խնդրել է լրացուցիչ գումարով օգնել: Քանի որ Արշակյանն այդ տարածքը չի օգտագործել, որպես լրացուցիչ գրավ, դա դրվել է բանկում, սակայն վարկային գիծը ոչ մի դրամով չի ավելացել»:

Փաստաբանը շեշտեց, որ Էդգար Արշակյանին մեղսագրվում է մի արարք, որն օբյեկտիվ իրականությունում գոյություն չունի. «Ասում են՝ Գրիգոր Խաչատուրովն է իրականում այդ տարածքը ձեռք բերել, որի համար որեւէ փաստական հիմք չկա, եւ Էդգար Արշակյանը հանդիսացել է, այսպես ասած, քողարկված անձ Խաչատուրովի գործարքը թաքցնելու համար»:

Նրա դիտարկմամբ՝ խտրական վերաբերմունք կա Խաչատուրովի նկատմամբ, ինչը պայմանավորված է նրա անձով. «Այսինքն՝ խնդիրը ոչ թե գործարքն ու ենթադրյալ քողարկումն է, այլ կոնկրետ նրա անձն է, որ ամեն կերպ ցանկանում են կալանքի հասնել, ինչը, համոզված եմ, դատարանը թույլ չի տա այս պարագայում»:

Հիշեցնենք, որ Գրիգորի Խաչատուրովն այն միակ գեներալն էր, ով Օնիկ Գասպարյանի հետ հրապարակային պահանջում էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, ինչից հետո նրան ազատեցին զբաղեցրած պաշտոնից:

Փետրվարի սկզբին գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը խորհրդարանում էր «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու հարցով: Դատախազը պաշտպանության նախկին նախարարի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու երեք միջնորդություն ներկայացրեց:

Ըստ Վարդապետյանի՝ Սեյրան Օհանյանի պաշտոնավարման օրոք Պաշտպանության նախարարության գործող երկու հատուկ նշանակության հողամասեր՝ զորանոցով, կից այլ շինություններով, վաճառվել են կադաստրային արժեքից մի քանի անգամ ցածր գնով: Գլխավոր դատախազն ասաց, որ վաճառված հողատարածքներն Արարատի մարզի Արմաշ համայնքում են, շինություններից մեկը փաստացի վաճառվել է զորամասերից մեկի հրամանատար Գրիգորի Խաչատուրովին չորս միլիոն դրամով, իսկ նա բանկում գրավադրել է 18 միլիոնով:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ԴԵՊՔԻ ՎԱՅՐՈՒՄ ԳՏԵԼ ԷԻՆ 8 ՊԱՐԿՈՒՃ

Փետրվարի 10-ին՝ ժամը 18:50-ին, «Էրեբունի» բժշկական կենտրոնից ոստիկանության Շենգավիթի բաժին հաղորդում էր ստացվել, որ հրազենային վնասվածքով բուժօգնության է դիմել 37-ամյա մի տղամարդ: Հիվանդանոց օպերատիվ խումբ էր մեկնել:

Պարզվել էր, որ նա հրազենային վնասվածքը ստացել էր մայրաքաղաքի Սեւանի փողոցում: Քրեական ոստիկանության, Երեւան քաղաքի վարչության եւ Շենգավիթի բաժնի քրեական հետախույզների համատեղ ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել էր, որ ժամը 18.30-ի սահմաններում մայրաքաղաքի Սեւանի փողոցում կենցաղային հարցերի շուրջ վիճաբանություն էր եղել, այնուհետեւ հիվանդանոց տեղափոխված «Տոյոտա» մակնիշի մեքենայի ուղղությամբ կրակոցներ էր արձակել 32-ամյա մի տղամարդ եւ մեքենայով հեռացել էր դեպքի վայրից: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել էր 9 մմ տրամաչափի 8 պարկուճ:

Նախաձեռնվել էր քրեական վարույթ: Նշանակվել էին փորձաքննություններ:

Դեպքից մեկ շաբաթ անց՝ փետրվարի 17-ին, ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները եւ Արարատի ու Արտաշատի բաժինների ծառայողները Արարատի մարզի Տափերական գյուղում հայտնաբերեցին ու ձերբակալեցին կրակոցներ արձակած 32-ամյա երեւանցուն: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեցին երկու ատրճանակ, փամփուշտներ, դանակ եւ Մարիխուանայի նմանվող զանգված:

Ձերբակալվածը ներկայացվել է նախաքննական մարմին: Հանգամանքները քննությամբ պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

ԴԵՐԱՍԱՆԸ ՎԹԱՐԻ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Արմավիրի ճանապարհին վթարի է ենթարկվել հայտնի դերասան Ռաֆայել Երանոսյանը:

Shamshyan.com-ը գրել էր, որ փետրվարի 21-ին խոշոր ավտովթար է տեղի ունեցել Արմավիրի մարզում: Ժամը 13:10-ի սահմաններում Երեւան-Արմավիր ավտոճանապարհի 36 կմ հատվածում՝ Մեծամորի վարչական տարածքում, բախվել են Toyota CRH եւ VAZ 2106 մակնիշի ավտոմեքենաները:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, «06»-ի վարորդին ու ուղեւորին առաջինն օգնության են հասել Toyota CRH-ի վարորդը եւ օպերատիվորեն ժամանած «Մեծամոր» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը, տեղում առաջին բուժօգնություն են ցուցաբերել, ապա տեղափոխել «Արմավիր» բժշկական կենտրոն:

Ոստիկանությունն ու քննչական վարչությունը պարզում են վարորդների եւ վիրավորների ինքնությունը:

Ըստ նախնական տեղեկությունների՝ վթարի մեղավորը եղել է «06»-ի վարորդը, որը դեպի Արմավիր ընթանալիս Toyota-ի վարորդի համար ստեղծել է վթարային իրավիճակ:

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ վթարի ենթարկված «Տոյոտա»-ի վարորդը հայտնի դերասան Ռաֆայել Երանոսյանն է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՊԱՆԵԼ Է ՈՐԴՈՒՆ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում ավարտվել է Արմավիրի մարզի 65-ամյա բնակչի կողմից որդուն սպանելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

2022 թվականի հուլիսի 24-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, Արմավիրի մարզի Գայ գյուղի տներից մեկում 65-ամյա տղամարդու եւ որդու միջեւ ծագած վիճաբանության ընթացքում վերջինս սկսել է կոտրել տան գույքը եւ հոր հասցեին սպանության սպառնալիքներ հնչեցրել: Որդու պահվածքից հոր համբերությունը սպառվել է, եւ նա, խոհանոցից վերցնելով դանակը, ապօրինի կյանքից զրկելու դիտավորությամբ խոհանոցային դանակով հարվածել է որդու պարանոցի հատվածին: Վերջինս ընկել է, որից հետո վեր կենալով՝ վազել է փողոց եւ հանդիպելով համագյուղացիներից մեկին՝ խնդրել է իրեն տեղափոխել հիվանդանոց, որտեղ էլ ստացած մարմնական վնասվածքներից մահացել է: Նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ 65-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննության առնելու:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 20-ից 21-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 50 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՀՆԴԻԿՆԵՐԸ ՀԱԳՈՒՍՏ ԵՆ ԿԱՐՈՒՄ

Իջեւան քաղաքի նախկին հանրախանութի երկրորդ հարկում գործում է «Իջ գրանդ տեքստիլ» հայ-ռուսական արտադրամասը, որտեղ աշխատում է 140 մարդ: Այդտեղ արտադրվում է զինվորական հագուստ եւ տարբեր տեսակի արտահագուստ, արտադրանքն արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն: Կարի արտադրամասի աշխատողներն Իջեւան քաղաքի եւ Իջեւան համայնքի գյուղերի բնակչուհիներ են, աշխատողներից 32-ը հնդիկ երիտասարդներ են: Արտադրամասի տնօրեն Միեր Միրզոյանը հայտնեց, որ հնդիկ երիտասարդները բարձր արտադրողականությամբ են աշխատում: Հնդիկների կեցության եւ գիշերակացի համար հանրախանութի շենքի 3-դ հարկում ստեղծվել են նորմալ պայմաններ: Իջեւան քաղաքի բնակիչները բարյացակամ են իրենց քաղաքում աշխատող, աշխատանքից ազատ ժամանակ քաղաքում գնումներ անող, զբոսնող հնդիկ երիտասարդների հանդեպ:

ԳՆԵԼ ԵՆ 40 ՏՈՒՆ

Աղավնավանքը Դիլիջան խոշոր համայնքի գյուղերից է, որը գտնվում է Դիլիջանից 27 կմ հեռավորությամբ: Գյուղը նախկինում ադրբեջանաբնակ է եղել, կոչվել է Սալահ: Ներկայումս փաստացի 262 բնակիչ ունեցող բնակավայրում ապրում են Ադրբեջանի տարբեր շրջաններից հարկադրված գաղթածները, որոնց մեծ մասը Դաշքեսանի, Շամխորի շրջանների նախկին բնակիչներ ու նրանց սերունդներն են: Աղավնավանքի վարչական ղեկավար Ալեքսանդր Հարությունյանը հայտնեց, որ Ադրբեջանի տարբեր տեղերից հարկադիր գաղթած, Աղավնավանքում բնակվողները միմյանց հետ հաշտ ու խաղաղ, լավ հարաբերությունների մեջ են: Աղավնավանքի միջնակարգ դպրոցում սովորում է 36 աշակերտ: Բնակավայրի վարչական ղեկավարի խոսքերով՝ գյուղ մտնող ավտոճանապարհը շատ բարեկարգ է, լավ վիճակում է նաեւ գյուղամիջյան հիմնական ավտոճանապարհը: Աղավնավանքի առանձնատները կառուցվել են խորհրդային ժամանակ ադրբեջանցիների կողմից, այդ տներում վերաբնակվածները հիմնանորոգել կամ վերանորոգել են դրանք, ավելի բարեկարգ դարձրել: Գյուղի տների մի մասը դատարկ է, սակայն դրանք լքված չեն: Գյուղի ընդհանուր 156 տներից մոտ 40-ը գնել են Երեւանի բնակիչները, որոնց դուր է եկել տեղի գեղեցիկ բնությունը, մաքուր օդը: Աղավնավանքի նկատմամբ երեւանցիների հետաքրքրությունը բարձրացել է գյուղի տների շուկայական գները: Աղավնավանքում ավանդաբար խնդիր է եղել խմելու եւ ոռոգման ջրի սակավությունը, այժմ նախատեսվում է պետական սուբվենցիոն ծրագրով խմելու ջրագիծ կառուցել, առաջիկայում կիրականացվի նաեւ 2 կմ երկարությամբ ոռոգման ջրագծի շինարարությունը: Աղավնավանքի բնակիչները հիմնականում զբաղվում են «Էյ Թի-Փի» բարեգործական կազմակերպության միջոցով դեկորատիվ ծառերի աճեցմամբ եւ վաճառքով: Նրանք այդ կազմակերպությունից ստանում են ծառերի սերմերը, դրանք ծլեցնում, հասցնում որոշակի բարձրության եւ այդ կազմակերպության միջոցով ծառերը վաճառում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

ԿԱՆԽԵԼ ԱՆՏԱՌՆԵՐԻ «ԿՈՏՈՐԱԾԸ»

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորությամբ՝ փետրվարի 20-ին Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերի դատախազություններում ամփոփվել են 2022 թվականի գործունեության արդյունքները:

Գլխավոր դատախազի առաջին կանգառը եղել է Գեղարքունիքի մարզի դատախազությունում, որտեղ մարզի դատախազի պաշտոնակատար Գագիկ Այվազյանը ներկայացրել է գրանցված հանցավորության վիճակը, հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները, բացահայտման ցուցանիշները եւ այլն:

Գագիկ Այվազյանի խոսքով՝ 2022 թվականի ընթացքում Գեղարքունիքի մարզում գրանցված հանցագործությունների թիվը, նախորդ տարվա համեմատ, աճել է 90-ով՝ կազմելով 1295 դեպք: 2022 թվականին գրանցվել է սպանության երեք դեպք (2021 թվականին սպանության դեպք չի արձանագրվել): Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը նվազել են 42-ով՝ կազմելով 324 դեպք, բնակարանային

գողություններն աճել են 31-ով՝ կազմելով 67 դեպք: Նվազել են դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելու, բռնաբարության եւ դրա փորձի, ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու հետեւանքով անզգուշությամբ առողջությանը վնաս պատճառելու, այդ թվում՝ մահվան ելքով վթարների դեպքերով հանցագործությունները: 2022 թվականի ընթացքում Գեղարքունիքի մարզի դատախազությունում պետական շահերի պաշտպանության ոլորտում կատարվել է 11 ուսումնասիրություն. դրանց արդյունքում նախաձեռնվել է երկու քրեական վարույթ, երեք ուսումնասիրությունների արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել, իսկ վեցը գտնվում են ուսումնասիրության փուլում:

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը մարզի դատախազին հանձնարարել է ուսումնասիրել «Սեւան» ազգային պարկի տարածքների վարձակալության եւ հնարավոր օտարումների իրավաչափությունը՝ ընդգծելով, որ «Սեւան» ազգային պարկի դեմ ուղղված ոտնձգությունը գտնվում է իր անմիջական հսկողության ներքո:

Գլխավոր դատախազի աշխատանքային հաջորդ կանգառը եղել է Տավուշի մարզի դատախազությունում: Մարզի դատախազ Գոռ Ալոյանը ներկայացրել է 2022 թվականի գործունեության արդյունքները:

Մասնավորապես՝ 2022 թվականի ընթացքում Տավուշի մարզում գրանցվել է հանցագործության 897 դեպք (2021 թվականին՝ 1021): 2022 թվականին աճ է արձանագրվել միջին ծանրության հանցագործությունների մասով՝ կազմելով 338 դեպք (2021 թվականին՝ 320), նվազում է արձանագրվել ծանր հանցագործությունների մասով՝ 128 դեպք (2021 թվականին՝ 143), իսկ առանձնապես ծանր հանցագործություններն աճել են 7-ով՝ կազմելով 13 դեպք (2021 թվականին՝ 6):

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Տավուշի մարզի դատախազին հանձնարարել է ուսումնասիրություն սկսել «Դիլիջան» ազգային պարկում հողօգտագործման եւ անտառահատումների վերաբերյալ, իրավապահ մյուս կառույցների հետ համագործակցությամբ գործողությունների ծրագիր մշակել՝ ուղղված անտառների «կոտորածը» կանխելուն:

Աննա Վարդապետյանը երկու մարզերի դատախազներին հանձնարարել է նաեւ համագործակցված աշխատանք իրականացնել Գեղարքունիքում եւ Տավուշում մեկ ամիս առաջ ներդրված Պարեկային ծառայության հետ՝ ընդգծելով հանցագործությունների կանխման ոլորտում պարեկային ծառայողների դրական դերակատարումը:

ԱՅՍ

ԻՆՉ ԵՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները փետրվարի 20-ին այցելել են Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ, ծանոթացել ստեղծված իրավիճակին, ինչպես նաեւ խնամակալների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերին. այս մասին տեղեկացնում են ՀՀ ՄԻՊ հասարակայնության հետ կապերի բաժնից:

ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչների համար շարունակում է խիստ մտահոգիչ մնալ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես ազգային կանխարգելման մեխանիզմի տարեկան եւ արտահերթ զեկույցներում պարբերաբար բարձրացված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ խնամքի հաստատություններում օրենքով չնախատեսված զսպման միջոցների կիրառման անթույլատրելի պրակտիկան, ստացիոնար սոմատիկ եւ հոգեբուժական օգնություն պահանջող դեպքերում վերջիններիս համապատասխան բժշկական հաստատություններում տեղավորելու եւ այնտեղ նրանց խնամքը պատշաճ կազմակերպելու, զբաղվածության ապահովման, հոգեբույժների խիստ անբավարար քանակի, հատուկ կարիքներ ունեցող անձանց խնամքի ապահովմանն առնչվող հարցերը եւ այլն:

ՄԻՊ-ի արձանագրած համակարգային լուծում պահանջող խնդիրների եւ դրանց լուծման առաջարկների նկատմամբ անհետեւողական վերաբերմունքը, ինչպես նաեւ պատասխանատու մարմինների վերահսկողության բացակայությունը հանգեցրել են ստեղծված իրավիճակին:

Այցի արդյունքներն արտացոլող փաստաթուղթն արձանագրված խնդիրների վերաբերյալ պարզաբանումների պահանջով Մարդու իրավունքների պաշտպանի ժամանակավոր փոխարինողը կուղարկի ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, եւ, ըստ անհրաժեշտության, կքննարկվեն արձանագրված խնդիրների լուծման հնարավորություններն ու ուղղությունները:

ՄԻՊ-ը շարունակելու է իր ուշադրության կենտրոնում պահել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը, մասնավորապես՝ ստեղծված իրավիճակում նշված կենտրոնում պատասխանատու մարմինների կողմից այդ ուղղությամբ ձեռնարկվող քայլերի նկատմամբ:

Ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ օրերս ձերբակալվել են ինտերնատի տնօրենը, հոգեբույժը, բաժանմունքներից մեկի հերթապահ խնամող-սանիտարն ու հերթապահ բուժքույրը մի շարք չարաշահումների համար:

Հիշեցնենք, որ տուն-ինտերնատում զննության ընթացքում պարզվել է, որ բնակիչներից մեկի անկողինը՝ ներքնակը, գցված է հատակին՝ ջեռուցման մարտկոցների դիմաց, իսկ հիվանդի որովայնին ամրացված է եղել կտորից գոտի, որից ամրացված է եղել մետաղական շղթա՝ միացված ջեռուցման մարտկոցներին: Բացի այդ, տուն-ինտերնատի բնակիչներից մեկի ձեռքերն ու ոտքերը, մեջքի վրա պառկած դիրքում, կտորով կապված են եղել անկողնու չորս անկյուններից:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Կրկնաճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2023 թ. մարտի 22-ին, ժամը 13:00-ին «Նոյյան Տապան» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի «Յունիբանկ» ԲԲԸ-ում գրավադրված եւ սեփականության իրավունքով երրորդ անձանց պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով:

Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-4. ՀՀ ք. Հրազդան, Արտադրական գոտի, Գործարանային փող., թիվ 4 հասցեում գտնվող 166.08 քմ մակերեսով արտադրական բազա, 575.13 քմ մակերեսով օժանդակ շինություններ եւ 6860 քմ մակերեսով արդյունաբերական օբյեկտների համար նախատեսված հողամաս:

Մեկնարկային գինը սահմանվում է 458,074 ՀՀ դրամ:

Հողամասի կադաստրային արժեքը վճարված չէ, այն կազմում է 8,520,120 ՀՀ դրամ եւ ներառված չէ գույքի շուկայական արժեքի մեջ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով «Նոյյան Տապան» ՍՊԸ-ի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ 2472302180490020 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2023թ. մարտի 22-ին, ժամը 12:30-ին պարտապան Վարդան Ավետիսյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 հասցեում կանցկացվի սեփականության իրավունքով Վարդան Ավետիսյանին պատկանող անշարժ գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով, բաց դասական եղանակով:

Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիսում գտնվող ավտոտնակը:

Մեկնարկային գինը սահմանվում է 1,160,765 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

-Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետակա գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով Վարդան Ավետիսյանի սնանկության հաշվին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ 2472303816560000 հաշվեհամարին՝ մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

«Team ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» Գ

ՄՐՑՈՒՅԹԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ

Հայկական HOPSHOP-ը 53 երկրներից այլ ներկայացուցիչների հետ միասին մրցելու է 1 միլիոն ԱՄՆ դոլար պարգեւի համար:

Ձեռներեցության աշխարհի գավաթ մրցույթի կազմակերպիչներն այսօր հայտնում են, որ EWC Հայաստան 2022-ի երկու ազգային հաղթողներց մեկն ընդգրկվել է EWC համաշխարհային եզրափակիչ փուլ անցած 100 ստարտափների կազմում՝ մրցելու 1 միլիոն ԱՄՆ դոլար մրցանակի համար: Մրցույթի եզրափակիչ փուլը տեղի կունենա մարտի 9-12-ը Բիբան 2023 միջոցառման շրջանակներում, որը համարվում է Սաուդյան Արաբիայի ամենամեծ միջոցառումը՝նախատեսված ձեռներեցների եւ փոքր ու միջին ձեռնարկությունների համար:

Հայաստանը ներկայացնող ստարտափը լինելու է HOPSHOP-ը, որը 2022 թվականի օգոստոսի 13-ին տեղի ունեցած EWC Հայաստան 2022 մրցույթի երկու ազգային հաղթողներից մեկն է:

Ձեռներեցության աշխարհի գավաթը, որը կազմակերպվում է Համաշխարհային ձեռներեցության ցանցի՝ GEN (Global Entrepreneurship Network)-ի եւ Monshaʼat-ի (Սաուդյան Արաբիայի փոքր եւ միջին ձեռնարկությունների գլխավոր վարչություն) հետ համատեղ համարվում է ամենամեծ եւ ամենահարուստ ստարտափ մրցույթներից: Ամեն տարի ձեռներեցները մրցում են 1 միլիոն դոլարի չափով դրամական պարգեւների եւ դրսից բարձր արժեք ունեցող ներդրումների, աջակցության եւ հանրայնացման համար:

2021 թվականից սկսած՝Հայաստանում EWC ազգային մրցույթը կազմակերպվում է Հայաստանի ամերիկյան համալսարանի Ձեռներեցության եւ նորարարական տեխնոլոգիաների կենտրոնի (EPIC) կողմից՝ազգային էկոհամակարգի մի քանի պետական եւ մասնավոր կազմակերպությունների հետ մեկտեղ:

«Մենք չափազանց ուրախ ենք, որ արդեն երկրորդ տարին է, ինչ Ձեռներեցության ազգային գավաթի համաշխարհային եզրափակիչ փուլում Հայաստանն ունի իր ներկայացուցիչը»,- ասում է Նժդեհ Հովհաննիսյանը, որը EPIC կենտրոնի փոխտնօրենը եւ EWC մրցույթի ազգային համակարգողն է: «Այժմ մենք անհամբեր սպասում ենք՝ լսելու Ռիադում անցկացվող մրցույթի եզրափակիչ փուլի ընթացքում HOPSHOP ստարտափի ձեռքբերումների մասին»:

2019 թվականին մեկնարկից ի վեր՝ EWC-ն ունեցել է ավելի քան 400,000 հայտադիմումներ՝ 200 երկրներից, որոնց հնարավորություն է տվել ձեռք բերել ավելի քան 3 միլիոն դոլարի չափով դրամական պարգեւներ եւ եւս 256 միլիոն դոլար արժողությամբ բոնուսներով եւ անվճար աջակցության ծառայություններ:

Եզրափակիչ անցած 100 մասնակիցները, որոնք հայտնի են որպես EWC 100, ընտրվել են որակավորման մրցումներում հաջողության հասնելուց հետո: Լավագույն կատարողականություն ունեցող 250 ստարտափները հրավիրվել են մասնակցելու եռօրյա ճամբարին, որոնցից ընտրվել են 100-ը՝ մասնակցելու Համաշխարհային եզրափակիչ փուլին:

«Այս ընկերությունները եւ դրանց հիմնադիրները մեզ բոլոր փուլերում ապշեցրել են,- ասում է GEN-ի նախագահ Ջոնաթան Օրթմանսը:- Նրանք աշխարհի ամենահրատապ մարտահրավերներին ուղղված նորարարական լուծումներով կյանքեր փոխելու ճանապարհին են»:

EWC 100 մասնակիցները հետեւյալ աշխարահամասերից են՝Աֆրիկա (6), Ասիա (17), Եվրոպա (28), Մերձավոր Արեւելք (12), Հյուսիսային Ամերիկա (14), Օվկիանիա (2), Հարավային Ամերիկա (20) եւ Կարիբյան ավազան (1):

Էր Ռիադում գտնվելու ժամանակ EWC 100-ը հնարավորություն կունենա տեսնելու Սաուդյան Արաբիայի զարգացող ստարտափ միջավայրը:

Վերջին տարիներին էկոհամակարգը գրանցել է տրանսֆորմացիոն աճ՝2020, 2021 եւ 2022 թվականներին վենչուրային ներդրումների ռեկորդային բարձր ցուցանիշներ գրանցելով:

Բացի 300,000 ԱՄՆ դոլար գլխավոր մրցանակի համար պայքարելուց, ստարտափները կպայքարեն նաեւ մասնագիտացված կատեգորիաներում:

Բոլոր 100 միջազգային ֆինալիստները կստանան 100,000 ԱՄՆ դոլար՝նվեր-ծառայությունների տեսքով, որոնք տրամադրելու են այնպիսի գործընկերներ, ինչպիսիք են AWS, Freshworks, Google Cloud, Hubspot, Stripe, Zoom եւ շատ այլ գործընկերներ:

Ձեռներեցության աշխարհի գավաթը հնարավոր է դարձել ազգային եւ համաշխարհային գործընկերների միասնական աջակցության շնորհիվ, որոնց թվում են One Valley-ն, Համաշխարհային կրթության եւ առաջնորդության հիմնադրամը (tGELF), Ձեռներեցների կազմակերպությունը, Գիտության եւ տեխնոլոգիայի Քինգ Աբդուլլահ համալսարանը եւ Startup Genoշe-ը, իսկ Միսկ հիմնադրամը հիմնադիր գործընկեր է: EWC Armenia 2022 մրցույթը հովանավորվել է Serviձe Titan-ի, GIZ Armenia/EU4Business-ի, Team Telecom Armenia-ի եւ Տնտեսագիտական կրթության եւ հետազոտությունների աջակցման կենտրոնի (CPEER) կողմից:

Հարցազրույցների եւ լրացուցիչ հարցերի համար խնդրում ենք դիմել Նժդեհ Հովհաննիսյան՝EWC Հայաստանի ազգային համակարգող, Ձեռներեցության եւ նորարարական տեխնոլոգիաների կենտրոն (EPIC), Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ)՝ ewc.epic@aua.am:

HOPSHOP-ի մասին

HOPSHOP-ը Shazam-ն է նորաձեւության համար: Սա արհեստական ինտելեկտի վրա հիմնված տեսողական որոնման ծրագիր է, որը հեշտացնում է հագուստի, կոշիկների եւ աքսեսուարների որոնման եւ ձեռք բերման գործընթացը: Ծրագրի նորարարական տեխնոլոգիայով օգտատերերը կարող են լուսանկարել իրը կամ վերբեռնել առկա լուսանկարը, իսկ հավելվածը կբացահայտի նմանատիպ իրերը եւ կտրամադրի գնման համար համապատասխան տարբերակներ: Ստարտափի նպատակն է ապահովել հարմարավետ եւ արդյունավետ գնումներ մեր հաճախորդների համար: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.hopshop.ai:

EPIC-ի մասին

Ձեռներեցության եւ նորարարական տեխնոլոգիաների կենտրոնը (EPIC) Հայաստանի ամերիկյան համալսարանում (ՀԱՀ) գտնվող հարթակ է՝ միտված խթանելու ձեռներեցային կրթությունը, միջառարկայական համագործակցությունը եւ ստարտափ վենչուրային (ձեռնարկատիրական) ինկուբացիան: EPIC-ը Հայաստանի ամերիկյան համալսարանում առաջացող ձեռներեցներին ապահովում է անհրաժեշտ հարմարություններով եւ աշխատանքային տարածքով, ինչպես նաեւ ծրագրերից եւ միջոցառումներից բաղկացած էկոհամակարգով: EPIC-ը նաեւ ապահովում է մենթորների, խորհրդատուների եւ ներդրողների հետ կապը: Ավելին իմանալու համար այցելեք www.epic.aua.am:

Ձեռներեցության աշխարհի գավաթի մասին

Ձեռներեցության աշխարհի գավաթն իր տեսակով ամենախոշոր ստարտափ մրցույթներից մեկն է: Ամեն տարի տասնյակ հազարավոր ձեռներեցներ՝աշխարհի ավելի քան 200 երկրներից, մրցում են կանխիկ 1 միլիոն ԱՄՆ դոլար մրցանակի համար եւ մեկ միլիոն դոլարից ավել արժեք ունեցող ներդրումների, աջակցության եւ հանրայնացման համար, որն իրականանում է ազգային pitձի մրցույթներից, ճամբարներից եւ համաշխարհային եզրափակիչ փուլի մրցույթներից բաղկացած ընթացակարգով: Նշենք, որ միջոցառմանը ներկա են նաեւ լինում առաջատար ներդրողները: Ձեռներեցության աշխարհի գավաթը, սակայն, ավելին է, քան պարզապես մրցույթը: Համաշխարհային ձեռներեցության ցանցի՝GEN եւ Monshaʼat-ի համատեղ կազմակերպմամբ եւ աշխարհի ավելի քան 100 գործընկերների աջակցությամբ՝մրցույթը կապում է բոլոր ստարտափային մակարդակների դիմորդներին՝գաղափարի փուլից մինչեւ ընդլայնում: Սա հնարավորություն է տալիս մասնակիցներին անցնել համաշխարհային մակարդակի վերապատրաստում, ռեսուրսների եւ մենթորության միջոցով բարելավելու իրենց հմտությունները եւ իրենց ստարտափները տեղափոխել հաջորդ մակարդակ:

Ավելին իմանալու համար այցելե՛ք www.entrepreneurshipworldcup.com:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

ԱՃՈՒՐԴ՝ ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

2023թ-ի մարտի 03-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Թիվ 1 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 20,8 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 288.000 ՀՀ դրամ: Թիվ 3 լոտ՝ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 12,2 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 168.900 ՀՀ դրամ: Թիվ 6 լոտ՝ոսկյա զարդ՝15,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 15 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 207.700 ՀՀ դրամ: Թիվ 10 լոտ՝ոսկյա ջարդոն՝ 30,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 30 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 415.400 ՀՀ դրամ: Թիվ 60 լոտ՝ ոսկյա ջարդոն՝ 15,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 15,7 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 217.400 ՀՀ դրամ: Թիվ 38 լոտ՝ոսկյա ջարդոն՝7,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 96.900 ՀՀ դրամ: Թիվ 43 ոսկյա ջարդոն՝ 7 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝96.900 ՀՀ դրամ: Թիվ 45 լոտ՝ոսկյա ջարդոն՝9,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9 գր.),՝585 հարգի, լոտի մեկնարկային գինը 124.600 ՀՀ դրամ: Թիվ 55 լոտ՝ ոսկյա ջարդոն՝4,2 գր. քաշով, 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 58.100 ՀՀ դրամ: Թիվ 15 լոտ՝ ոսկյա զարդեր՝ 84,7 գր. ընդհանուր քաշով, որից 17գր. քաշով ոսկյա զարդերը՝ 875 հարգի, 343.300 ՀՀ դրամ, 62 գր. քաշով ոսկյա զարդեր՝ 585 հարգի, 834.800 ՀՀ դրամ, 5,7 գր. քաշով ոսկյա զարդ՝500 հարգի, 64.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 1.242.800 ՀՀ դրամ: Թիվ 18 լոտ՝ ոսկյա ջարդոն՝ 14,9 գր. ընդհանուր քաշով, որից 2,2գր. քաշով ոսկյա ջարդոնը՝500 հարգի, 25.000 ՀՀ դրամ, 12,7 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 11 գր.)՝585 հարգի, 148.100 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 173.100 ՀՀ դրամ: Թիվ 19 լոտ՝ ոսկյա ջարդոն՝46,8 գր. ընդհանուր քաշով, որից 28,4գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 26,5 գր.)՝ 500 հարգի, 300.700 ՀՀ դրամ, 6,3 գր. քաշով ոսկյա ջարդոնը՝ 958 հարգի, 139.100 ՀՀ դրամ, 12,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը՝ (զուտ քաշը 11,5 գր.) 585 հարգի, 154.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 594.600 ՀՀ դրամ: Թիվ 22 լոտ՝ ոսկյա զարդեր՝16,7 գր. ընդհանուր քաշով, որից 8,6 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 8 գր.)՝585 հարգի, 107.700 ՀՀ դրամ, 5,4 գր. քաշով ոսկյա զարդը՝ 958 հարգի, 119.200 ՀՀ դրամ, 2,7 գր. քաշով ոսկյա զարդը՝ 750 հարգի, 46.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 273.400 ՀՀ դրամ: Թիվ 26 լոտ՝ ոսկյա ջարդոն՝9,9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9,5 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 127.900 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/. հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00-ն, ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝ դիմումի հիման վրա:

ՅՈՒՆԻԲԱՆԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2023 թ. մարտի 22-ին, ժամը 12:00-ին <<Տաթվան>> ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց պող. 5, սենյակ 311 սենյակ հասցեում կանցկացվի <<Տաթվան>> ՍՊ ընկերության պատկանող գույքերի աճուրդ վաճառքը

ԼՈՏ 1. ԳԱԶ 322132-220 մակնիշի 558 LS 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 115,145 ՀՀ դրամ:

ԼՈՏ 2. ԳԱԶ 322132 մակնիշի 455 OC 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 41,175 ՀՀ դրամ:

ԼՈՏ 3. ԳԱԶ 322132-220 մակնիշի 332 LL 62 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 88,454 ՀՀ դրամ:

ԼՈՏ 4. ԳԱԶ 32213 մակնիշի 775 AD 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 86,421 ՀՀ դրամ:

ԼՈՏ 5. ԳԱԶ 322132 մակնիշի 843 LS 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 51,470 ՀՀ դրամ:

ԼՈՏ 6. ԳԱԶ 322132 մակնիշի 331 LL 62 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 78,236 ՀՀ դրամ:

ԼՈՏ 7.ԳԱԶ 322132-220 մակնիշի 213 LV 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 14,409 ՀՀ դրամ:

ԼՈՏ 8. ԳԱԶ 322132-220 մակնիշի 333 LL 62 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 132,759 ՀՀ դրամ:

ԼՈՏ 9. ԳԱԶ 32213 մակնիշի, 332 OT 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 131,797 ՀՀ դրամ:

ԼՈՏ 10. ԳԱԶ 322132-220 մակնիշի , 288 LD 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 40,793 ՀՀ դրամ:

ԼՈՏ 11. ԳԱԶ 322132-220 մակնիշի 215 LV 61 պետական համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 34,516 ՀՀ դրամ:

ԼՈՏ 12. ԳԱԶ 32213- մակնիշի, 340 AG 61 պետ համարանիշի մարդատար ավտոմեքենան (անսարք վիճակում):
Մեկնարկային գինը կազմում է 119,069 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝
-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:
-Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով <<Տաթվան>> ՍՊԸ սնանկության հատուկ հաշվին՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ-ի <<Նոր Արեշ>> մասնաճյուղ 1150014223993952 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան /ք. Երեւան. Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

ԼՈՒՐԵՐ

«ԲԱՐԲԱՌԸ ՄԵՐ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ Է»

Երեկ Մայրենի լեզվի միջազգային օրն էր: Տոնի կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը դպրոցականների շրջանում անցկացրել է հեղինակային տեսանյութերի մրցույթ՝ «Բարբառը մեր հարստությունն է» խորագրով: Համաձայն մրցութային կանոնների՝ յուրաքանչյուր դպրոց կարող էր ներկայացնել մինչեւ 1 րոպե տեւողությամբ մեկ տեսանյութ, որում հայերենի որեւէ բարբառով պետք էր ներկայացնել մայրենի լեզվին նվիրված բեմականացում կամ ազատ ոճի այլ մտահղացում: Դպրոցները պետք է դրանք հրապարակեին իրենց սոցիալական հարթակներում #խոսումենքբարբառով նշիչով՝նշելով ԿԳՄՍ նախարարության էջը:

Տեսանյութերը գնահատել են ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատված հանձնաժողովի անդամները՝ ներկայացուցիչներ ԿԳՄՍ նախարարությունից, Լեզվի կոմիտեից, ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտից եւ ԿՁՆԱԿ-ից: ԿԳՄՍ նախարարությունը ստացել է շուրջ 450 տեսանյութ, որից ընտրվել է չափանիշներին համապատասխանող 177-ը: Նշված պահանջներին չհամապատասխանող տեսանյութերը չեն դիտարկվել: Առավելագույն միավորներ հավաքած 5 տեսանյութերը կհրապարակվեն ԿԳՄՍՆ ֆեյսբուքյան էջում՝նշելով դպրոցը:

ՀԱՅՏԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ

Մեկնարկել է «Դիջիկոդ» կիրառական ծրագրավորման պատանեկան ամենամյա մրցույթի հայտերի ընդունումը: Այս տարի այն կանցկացվի 8-րդ անգամ Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) կողմից: Մրցույթի հիմնական նպատակներն են նպաստել պատանիների մոտ ալգորիթմական մտածողության զարգացմանը, նրանց խաղերի սպառողներից վերածել խաղ ստեղծողների, բացահայտել տաղանդավորներին եւ հնարավորություն տալ զարգացնել նրանց ունակությունները, ինչպես նաեւ բացահայտել ակտիվություն ցուցաբերած դպրոցներին եւ անհատներին: «Դիջիկոդ» մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ծրագրավորել Scratch, K-turtle, Python, Particle, ESP32, IDE, C+++ ծրագրերով: Մրցույթին կարող են մասնակցել ինչպես դպրոցականները, այնպես էլ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողները: Հայտերի ընդունման վերջնաժամկետը մարտի 25-ն է:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱԴԱՐԵՑՎԻ

«Յունիբանկ» ԲԲԸ-ի խորհրդի 28.12.2022թ. որոշման եւ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 08.02.2023թ. թիվ 1/48 Ա որոշման համաձայն՝01.03.2023թ.-ից կդադարեցվի «Յունիբանկ» ԲԲԸ-ի «Հրազդան Կենտրոն» /հասցե՝ ք.Հրազդան, Կենտրոն, Ա-1 թաղամաս/ մասնաճյուղի գործունեությունը:

«Հրազդան Կենտրոն» մասնաճյուղի ակտիվները եւ պարտավորությունները կփոխանցվեն բանկի «Սեւան» մասնաճյուղին / հասցե՝ ք. Սեւան, Նաիրյան փ.163/:

Յունիբանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

Տեղեկատու կենտրոն՝+374 10 59 55 55:

● *Փետրվարի 23-ին «Կամի» երաժշտական ակումբում տեղի կունենա «Kami Friends» համերգային փառատոնը: Տոմսերի արժեքը՝5000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Երեխայիս ցածր գնահատական են դրել դասը խանգարելու համար, չնայած լավ է պատրաստված եղել: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Մարինե Լազարյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե հայտնվել եք մի իրավիճակում, երբ ուսուցիչը ցածր գնահատելը երեխայի նկատմամբ կիրառել է նրա վարքագծի համար, ապա Դուք կարող եք այդ մասին տեղեկացնել դպրոցի տնօրինությանը՝ հայտնելով Ձեր առարկությունները եւ պարզաբանելով, որ ուսուցիչը կարող է երկու տեսակի կարգապահական տույժ կիրառել երեխայի նկատմամբ, եւ, բացի դրանից, ուսուցչի բոլոր գործողությունները համարվում են ապօրինի: Եթե, դրանով հանդերձ, Ձեր խնդիրը չլուծվի, եւ շարունակվեն նմանատիպ ճնշումները Ձեր երեխայի նկատմամբ, կամ Ձեր երեխայի համար ստեղծեն անհավասար պայմաններ կամ վատ վերաբերմունք ցուցաբերեն, ապա կարող եք այդ մասին անմիջապես ահազանգել Երեւանի քաղաքապետարանի թեժ գծով՝ 1-08 հեռախոսահամարով, կամ անմիջապես Երեւանի քաղաքապետարանի կրթության բաժին զանգահարել 011 514-249 եւ 011 514-250 հեռախոսա-համարներով: Եթե դպրոցը գտնվում է մարզերում, ապա անհրաժեշտ է խնդրի մասին հայտնել համապատասխան համայնքի ղեկավարին կամ մարզպետարանի աշխատակազմին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դպրոցներում երեխաների կարգապահությունն ապահովվում է օրենքով, ուսումնական հաստա-տության կանոնադրությամբ եւ ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով: Ընդ որում՝ սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը կարգապահական նոր խախտում թույլ չի տվել եւ դրսեւորել է իրեն որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող: Ինչպես տեսնում ենք, ցածր գնահատական դնելը կամ ցածր գնահատելը չի կարող օգտագործվել երեխայի նկատմամբ որպես կարգապահական տույժ, որպես երեխայի վարքագիծը ուղղելու միջոց: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի գնահատվել՝ իր ուսումնական առաջընթացին եւ ունակություններին համապատասխան:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ոստիկանն ասում է, որ պետք է տուգանի ինձ դիմակ չկրելու համար: Որո՞նք են իմ իրավունքները, ի՞նչ կարող եմ անել:

Արամ Ջիրոյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դուք իրավունք ունեք նաեւ լռություն ցուցաբերել, այդ թվում՝ ոստիկանին չհայտնել Ձեր վերաբերյալ անձնական տվյալները, Ձեր անունը, ազգանունը եւ այլ տվյալները, սակայն այս դեպքում պետք է նկատի ունենաք, որ ոստիկանը Ձեր անձը պարզելու նպատակով իրավունք ունի Ձեզ հրավիրելու ոստիկանության բաժին, իսկ հրաժարվելու դեպքում՝ Ձեզ բերման ենթարկելու բաժին:

ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բաժին բերման ենթարկվելու դեպքում պետք է իմանալ, որ ոստիկաններն իրավունք ունեն Ձեզ բաժնում պահել ոչ ավելի, քան երեք ժամ, որի ժամանակ կրկին Դուք իրավունք ունեք ոստիկանին չհայտնել Ձեր անձի մասին տվյալներ, եւ երեք ժամը լրանալու պահից Ձեզ պետք է բաց թողնեն, եթե չեն կարողացել պարզել Ձեր անձը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

«Այս խորհրդանշական՝ Մայրենի լեզվի օրը Ազգային ժողովի իմ աշխատասենյակում ընդունեցի Գրքի տոնին նվիրված մրցույթի մասնակիցներին»,-ասել է Թագուհի Թովմասյանը:

Խոստացված գրքերը Կոմիտաս Վարդապետին նվիրված Հայ եկեղեցու պատմության հատընտիր նմուշներից էին:

«Մայրենի լեզվի անաղարտության պահպանությունը պետք է լինի յուրաքանչյուրիս պարտականությունը: Հույս ունեմ, որ գիրքը ոչ միայն կպահեք որպես հուշ, այլեւ կընթերցեք»,- նշել է իր խոսքում Թ. Թովմասյանը:

Պատգամավորը հյուրերին ծանոթացրել է խորհրդարանի աշխատանքներին, կազմակերպել շրջայց ԱԺ շենքում, այցելել են թանգարան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: